



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28938  
Մարտ 6, 1985

Արժանաշնորհ  
Տ. Վարդան Ա. ԲՆՅ. Տ. Ասատուրեան  
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
Նախագահ ծխական խորհուրդի  
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Վարդան,

Ստացած ենք փետրուար 22, 1985, թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 27ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ճան Մալճանեան  
Փիթըր Պաղտիկեան  
Կիվըն Յուսիկեան  
Սարգիս Տաւադարեան